

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Բ Հ Հ Ա Ն Պ Ա Գ-ԾՁԲ- 02310001

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏ ՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի
Ե Վ

«ԱՅ ԳԵՇԱՏ Ի (ԱՐՄ.) ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼ ԱՏ ՈՐԻԱ»

Հ Ա Մ Ս Ն Ք Ս Ի Ն Ո Չ Ա Ռ Ե Վ Տ Բ Ս Յ Ի Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ա Ն

Մ Ի Ջ Ե Վ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վահե Հակոբյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և «Այգեջատի (Արմ.) ԲԱ» ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող), (լիցենզիա N Կ-XX-001438, տրված 17.07.2010թ.), ի դեմս տնօրեն Նազելի Ավետիսյանի, որը գործում է «Այգեջատի (Արմ.) ԲԱ» ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊՅՅ ՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողն իրավունք ունի.

2.1.1. Սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան մատուցված պատշաճ ծավալի և որակի Բուժօգնության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

2.1.3. Հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համասնություններին գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում կազմակերպվող վերահսկմանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ամբողջ ծավալով՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և ՀՀ առողջապահության նախարարի անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,

2.2.2. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ներկայացնել Բուժօգնության աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ պայմանագրային գումարի ամսական համամասնություններին ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 6-րդ հավելվածով սահմանված չափաքանակներին շրջանակներում, այդ թվում հավելված 2-ով նշված ծախսային ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններին և հարկային հաշիվներին կազմում և ներկայացում, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ այլ հաշվետվություններ և տեղեկանքներ՝ համաձայն սույն պայմանագրի 4-րդ հավելվածի,

2.2.3. պետական բյուջեի համապատասխան ծրագրերի շրջանակներում հիվանդանոցային Բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ որոշում կայացնել՝ առաջնորդվելով Պատվիրատուի կողմից հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնություն շրջանակներում անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդություններին և վիճակներին» կողմնորոշիչ ցանկով (սույն դրույթը տարածվում է միայն հիվանդանոցային ձևով Բուժօգնություն տրամադրող Կատարողի նկատմամբ),

2.2.4. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայություններ մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.5. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալներին փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալներին փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետսնունցում:

2.2.6. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքներին ներկայացման կարգի մասին, ինչպես նաև ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունվարի 21-ի N 70-Ս հրամանի պահանջներին համապատասխանող ինտերնետային կայք էջի առկայությունը, պահպանումը և պարբերական թարմացումը,

2.2.7. բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու հետ կնքել վճարովի կամ համավճարային հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցման համապատասխան պայմանագրի՝ համաձայն ՀՀ իրավական ակտերով սահմանված օրինակելի ձևերի,

2.2.8. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը քաղաքացիներին համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ս հրամանով հաստատված կարգի,

2.2.9. ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով կազմակերպել բուժաշխատողներին մասնագիտական կատարելագործումը,

2.2.10. ապահովել գոյացած ֆինանսական միջոցներին արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները .

- 1) աշխատավարձ ,
- 2) հարկային պարտավորություններ ,
- 3) դեղերի և բժշկական նշանակություն ապրանքների գնում ,
- 4) այլ ծախսեր ,

2.2.11. սահմանել աշխատողներին աշխատավարձը , այդ թվում՝ ըստ բուժաշխատողներին տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը , ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված աշխատողներին աշխատանքի վարձատրություն հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան ,

2.2.12. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնություն հաշվառումը , գրանցումը , մուտքագրումը համապատասխան հաշվետվական-տեղեկատվական համակարգերում և արժանահավատ հաշվետվություններին էլեկտրոնային տարբերակներին ներկայացումը Պատվիրատուի՝ սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան , ինչպես նաև ապահովել տեղեկատվական համակարգի սպասարկումը սեփական միջոցներով՝ հաշվետվություններին էլեկտրոնային տարբերակներին անխափան ներկայացման նպատակով ,

2.2.13. ապահովել հաճախորդներին այցելություններին , բժշկական միջամտություններին , մատուցվող ծառայություններին վերաբերյալ տեղեկատվություն մուտքագրում էլ-առողջապահական համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում ,

2.2.14. սույն պայմանագրի կնքումից հետո 40-օրյա ժամկետում ապահովել առնվազն բժիշկներին , միջին բուժանձնակազմին , ինչպես նաև էլ-առողջապահական համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմին սույն պայմանագրի առկայություն ,

2.2.15 ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ապահովել էլ-առողջապահական համակարգից ստացվող տեղեկատվություն գաղտնիություններ ,

2.2.16. ներկայացված հաշվետվություններին տվյալներին իսկություն և արժանահավատություն համար պատասխանատու է Կատարողը ,

2.2.17. նախքան դեղերի և բժշկական պարագաների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին ,

2.2.18. հարյուր տոկոս պետությունը սեփականություն իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերություններին համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշներին , այդ թվում՝ շահութաբաժնեբաժնե սպահովման կատարումը ,

2.2.19. պայմանագրի գործողություն ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին ,

2.2.20. Պատվիրատուի կողմից վերահսկում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվություն ներկայացումը , ապահովել Պատվիրատուի վերահսկում իրականացնող մասնագետներին համար աշխատանքային պայմաններ , օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում ,

2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 5-ով սահմանված դրույթներին կատարումը , ինչպես նաև այդ դրույթներին

կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունները գաղտնիությունը,

2.2.22. կատարել Պետություն կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.2.23. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողներին մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին գնահատման ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքներին հիման վրա բուժաշխատողներին մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին կատարել ագործման և աշխատողներին աշխատանքային գործունեություն վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին:

2.3. Պատվիրատու ներկայացրած օրենքով սահմանված պայմաններում:

2.3.1. Ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել Կատարողի կողմից հաշվետվություններ կայացված Բուժօգնություն ծավալները, եթե Կատարողի կողմից բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն մատուցվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի Բուժօգնություն,

2.3.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողություն ժամկետում կրկնակի խախտել ու դեպքում:

1)առաջարկել համապատասխան իրավասու անձին Կատարողի նկատմամբ կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգապահական տույժեր,

2)կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և պատասխանատվություն այլ միջոցներ,

3)միակողմանի լուծել պայմանագիրը,

2.3.3. յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 15 օրվա ընթացքում քննարկել Կատարողի եռամսյակային գործունեության արդյունքները՝ Բուժօգնություն որակը, ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով հաստատված դրույթներին կատարումը, «Թեժ գծի» միջոցով կամ այլ աղբյուրներին ստացված բողոք-դիմումները, ոչ պաշտոնական վճարումների կատարման հաստատված դեպքերը, և ելնելով քննարկման արդյունքներից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի համաձայն միակողմանի լուծել պայմանագիրը,

2.3.4. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջներին կատարման նկատմամբ հսկողություն կամ վերահսկողություն կամ բողոքներին քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս րնտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն յուրաքանչյուր պայմանագրի, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումներին մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագրի չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի յուրաքանչյուր պայմանագրի կողմի համար առաջացող վնասներին կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

2.3.5. սույն պայմանագրի համաձայն, ստուգել (վերահսկել) Կատարողի կողմից բժշկական օգնություն և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայություններին կատարման ընթացքը, ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալները, որակը, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանատիությունը և ստացված ֆինանսական միջոցներին արդյունավետուն պատակային օգտագործման ճշտությունը և իրավական ակտերով սահմանված պահանջներին կատարումը և պահպանումը, սահմանել հայտնաբերված թերությունները և փակաս միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.6. հիվանդանոցային Բուժօգնություն մասով իրականացնել Բուժօգնություն ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությունը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչներին միջոցով, որոնց իրավասություններին շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպություններին հաստատում են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

2.3.7. պայմանագրով նախատեսված աշխատանքներին վերահսկման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայականներով և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու աշխատանքներն դուրս եկող հետ մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերություններին կատարմամբ՝ կապված նախորդ երկու տարիներին ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկման ծառայություններին ձեռքբերման հետ,

2.3.8. պահանջել պայմանագրով նախատեսված սույն ժերի և ստուգանքներին վճարում,

2.3.9. օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներին:

2.3.10 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտել է ակնհայտ է համարվում, եթե

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը,

2.3.11 Իր կողմից սահմանված ընթացակարգին համապատասխան իրականացնել Կատարողի բուժաշխատողներին մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին գնահատում և գնահատման արդյունքներին հիման վրա ներկայացնել առաջարկություններ Կատարողին՝ աշխատողներին մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին կատարելագործման, ինչպես նաև աշխատողներին աշխատանքային գործունեություն վերաբերյալ .

2.4. Պատվիրատու նպարտավոր է .

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնություն վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողություններին

կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը, Կատարողի կողմից սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված հաշվետվություններին ներկայացման ժամկետներին պահպանման պայմանով,

2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնակատարող կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետություն կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկման ռեզուրվարգավորող իրավական ակտերը,

2.4.4. կատարել պետություն կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկման ռեզուրվարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.4.5 գնումներին դիմաց վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայությունը դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարներին հետ,

2.4.6 պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի արդյունքը չրնդունելու կամ չմերժելու դեպքում, պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողին տրամադրել իր կողմից հաստատված հանձնման-րնդունման արձանագրությունը (պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը):

2.4.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի յուր ձեռնարկով մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնակատարելիքի փուտին հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագրի միակողմանի յուր ձեռնարկով վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն ենթակետում նշված կայքում հրապարակվելու և հաջորդող օրվանից:

III. ՎԵՐԱՀՄԱՆՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայություններին որակի և ծավալի համապատասխանությունը գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է.

3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2227-Ս հրամանով հաստատված կարգով,

3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական պարագաների գնման պատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացներին ընդունված պայմանագրերի կողմից արդյունքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրներին շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսներին նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊՍՏ ԱՄԽԱՆԱՏ ՎՈՒԹՅ ՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորություններին չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

4.2. Պարտավորություններին չպատշաճ կատարում է համարվում նաև.

4.2.1. եթե Կատարողի կողմից Պատվիրատուին ներկայացված Բուժօգնություն վերաբերյալ սույն պայմանագրի հավելված 4-ով նախատեսված հաշվետվություններում հայտնաբերված ոչ պատշաճ կամ ոչ արժանահավասար տեղեկություններ պարունակող հաշվետվություններին թիվը ամսական կտրվածքով կազմում է յուրաքանչյուր ձևին համապատասխան ներկայացված հաշվետվություններին 5 տոկոսը կամ ավելին,

4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնություն ծավալները ամբողջությամբ կամ մասնակի չտրամադրելը և/կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնություն տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախագոյացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում:

4.3. Սույն պայմանագրի հավելված 4-ով սահմանված հաշվետվություններին ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուղացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով՝ անկախ սույն պայմանագրի հավելված 3-ով սահմանվող տուժանքների կիրառումից:

4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուղացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով լրացուցիչ պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայություններին մատուցման պայմաններում» նշված պարտավորություններին չկատարման համար:

4.6. Սույն պայմանագրի շրջանակում ներկայացված հաշվետվություններին ստուգմամբ հայտնաբերված այն խախտումներին գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատու պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումներին արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին:

4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումներին ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունից և խախտումները վերացնելու պարտականությունից:

4.8. Տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու պարտականությունից:

4.9. Սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.10. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀ ԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑ ՌԻԹՅ ՌԻՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագրի կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագրի՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊՅՑ ՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագրի լուծվում է՝

6.1.1. Եթե լուծարվել կամ վերակազմակերպվել կամ սնանկ են ճանաչվել Կատարողը, որը այդ դեպքերում պարտավոր է հատուցել Պատվիրատուի կատարած բոլոր ծախսերը:

6.1.2. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑ ԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրի ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2017 թվականը: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են կողմերի միջև 16.12.2016թ.-ից մինչև 15.12.2017 թվականը ծագած հարաբերությունների նկատմամբ, բացառությամբ Պայմանագրի 2.3.7. կետի:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակներին նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Սույն կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում Պատվիրատուն կարող է միակողմանի լուծել սույն Պայմանագրի:

7.3. Սույն պայմանագրի փոփոխման և/կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայություն մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդություն պատմագրերի համարները:

7.4. Կոդմեքի միջև վեճերը լուծվում են Կոդմեքի բանակցություններին միջոցով, իսկ համաձայնություն չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաշորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայություններին ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6. Պայմանագրի կոդմեքից անկախ գործնական ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7 Պայմանագրի չի կարող փոփոխվել կոդմեքի պարտավորություններին մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ յուծվել կոդմեքի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումներին նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կոդմեքի պարտավորություններին մասնակի չկատարման կամ ամբողջությամբ յուծման կոդմեքի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումներին նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջեային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսված ֆինանսական միջոցներ:

7.8. Սույն պայմանագրից ծագած Կոդմեքի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կոդմեքի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կոդմեքի (ՀՀ ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.9. Սույն պայմանագրի և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ:

VIII. ԿՈՂՄԵՔԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅ ՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու`	Կատարող`
Հասցե` Երևան, Կառավարական տուն 3	Հասցե` Արմավիրի մարզ, գ. Այգեշատ, փ.9, շ.13/1
Սպասարկող բանկ` ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ` ՎՏԲ Արմավիրի մ/ճ
Բանկային հաշիվ` 900011105013	Բանկային հաշիվ` 16009025185300
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 04421459
ՀՀ առողջապահություն նախարարության աշխատակազմի դեկավարի պաշտոնակատար` Վահե Հակոբյան	«Այգեշատի (Արմ.) ԲԱ» ՀՈԱԿ-ի տնօրեն` Նազելի Ավետիսյան

----- (ս տո թ ա գ ը ու թ յ ու ն)	----- (ս տո թ ա գ ը ու թ յ ու ն)
„ 09 „ փե տր վ ար ի 2017թ.	„ 09 „ փե տր վ ար ի 2017թ.
Հ ե ո : Ֆ ա թ ս E-mail: info@moh.am	Հ ե ո . 093-92-53-83 Ֆ ա թ ս E-mail: aygeshat@bk.ru

Ծառայությունների մատուցման պայմաններ

<p>Պետություն կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկման պայմաններ</p>	<p>Կատարողի պատասխանատվությունը</p>
<p align="center">Գլուխ Ա. Հիվանդանոցային Բուժօգնություն</p> <p>Պետպատվերի շրջանակներում անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկման ծավալները ընդգրկում են բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը՝ այդ թվում:</p>	
<p>1. Բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու ընդունման, վարման և դուրս գրման հետ կապված փաստաթղթային ձևակերպումները նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևերով և կարգով վարումը,</p>	<p>1-ին կետում նշված փաստաթղթային ձևակերպումները օրենսդրորեն սահմանված ձևերով և կարգով չկատարման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 5000 դրամի չափով:</p>
<p>2. Բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ լաբորատոր ախտորոշիչ և գործիքային հետազոտությունների ամբողջ ծավալով իրականացումը,</p>	<p>2-րդ կետում նշված լաբորատոր ախտորոշիչ և գործիքային հետազոտությունների հաստատված ծավալները ամբողջովին կամ մասնակի չիրականացման դեպքում յուրաքանչյուր դեպքի համար կատարողականից կատարվում է նվազեցում 20 000 դրամի չափով:</p>
<p>3. Բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու բուժման համար անհրաժեշտ փոքր դեղերի և բժշկական պարագաների ապահովումը՝ կազմակերպության միջոցների հաշվին, ընդ որում՝ առանձին դեպքերում բուժումը բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու կողմից ձեռք բերված դեղերով թույլատրվում է կազմակերպել միայն բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացու գրավոր համաձայնությունով, հիվանդանոցային</p>	<p>3-րդ կետում նշված կարգի խախտման դեպքում, այդ թվում՝ եթե հիվանդանոցում դեղերի առկայություն պարագայում տվյալ դեղը ապահովվել է բժշկական օգնություն և սպասարկում ստացող կողմից, կատարողականից նվազեցվում է տվյալ դեպքի արժեքի 25%-ը:</p> <p>Հիվանդանոցային բուժման համար ծախսված դեղերի տեսականու առնվազն 75%-ը չապահովելու դեպքում տվյալ դեպքի փոխհատուցման չի բնդունվում:*</p>

<p>պատմ ազ ր ի մ ե ջ ձ ն ակ ե ր պ վ ած հ ի մ ն ավ ո ր վ ած ու թ յ ամ ք ն ր ժ շ կ ակ ան կ ազ մ ակ ե ր պ ու թ յ ան դ ե կ ավ ար ի կ ամ ն ր ա կ ո ղ մ ի ց լ ի ազ ո ր վ ած ան ձ ի թ ու յ լ տվ ու թ յ ամ ք :</p>	
<p>4. պե տակ ան պատվ ե ր ի շ ր ջ ան ակ ն ե ր ու մ ք ու ժ վ ո ղ ր ժ շ կ ակ ան օ գ ն ու թ յ ու ն ն ս պաս ար կ ու մ ս տաց ո ղ ք աղ աք աց ու հ ամ ար վ ճ ար ո վ ի հ ար ք ժ շ կ ակ ան ծ առ այ ու թ յ ան (օ ր ի ն ակ ` տե ս ակ ց ու թ յ ան վ ճ ար , ի ն ամ ո ղ ի հ ամ ար ն ախատե ս վ ած վ ճ ար ու մ ն ե ր , լ ր աց ու ց ի չ հ ար մ ար ու թ յ ու ն ն ե ր ո վ հ ի վ ան դ սս ե ն յ ակ ի հ ամ ար վ ճ ար ն այ լ ն) մ առ ու ց մ ան դ ե պք ու մ ծ առ այ ու թ յ ան տվ յ ալ տե ս ակ ի հ ամ ար պե տք է գ ո ր ծ ի ն ան ան վ ճ ար այ յ ր ն տր ան ք այ ի ն տար ք ե ր ակ ր :</p>	<p>4-ր դ կ ե տո վ ս ահ մ ան վ ած պահ ան ջ ն ե ր ը չ կ ստար ե լ ու դ ե պք ու մ կ ստար ո ղ ակ ան ի ց կ ստար վ ու մ է ն վ ազ ե ց ու մ տվ յ ալ դ ե պք ի ամ ք ո ղ ջ գ ու մ ար ի 20%-ի չ ափ ո վ :</p>
